ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ ՀՕ-296-Ն ՕՐԵՆՔԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին**

## «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) ամբողջ տեքստում «Լիազոր մարմնի ուսումնական հաստատություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Սպայական (ռազմաուսումնական) բուհ» բառերով:~~

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը «առկա ուսուցման ձևով» բառերից հետո լրացնել «(Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ լրիվ բեռնվածությամբ)» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում՝

1) «հաստատություններում առկա ուսուցման» բառերը փոխարինել «հաստատություններ առկա ուսուցման ձևով (Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ լրիվ բեռնվածությամբ) սովորելու նպատակով» բառերով.

2) «ասպիրանտներին,» բառը հանել:

**Հոդված 4.** Օրենքի 34-րդ հոդվածը «հեռակա ուսուցման ձևով» բառերից հետո լրացնել «, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մասնակի բեռնվածությամբ» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 11-րդ կետի «հաստատության հեռակա ուսուցման ֆակուլտետում» բառերը փոխարինել «հաստատությունում՝ մասնակի բեռնվածությամբ» բառերով.

2) 11.2-րդ կետի «հեռակա ուսուցման ձևով» բառերը փոխարինել «մասնակի բեռնվածությամբ» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 55-րդ հոդվածի 9-րդ մասում՝

1) «և հետբուհական» բառերը հանել.

2) «հեռակա» բառը փոխարինել «մասնակի բեռնվածությամբ» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

**Հանրապետության նախագահ**

**Վ. Խաչատուրյան**

2025 թ. հոկտեմբերի 9

Երևան

ՀՕ-296-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 10 հոկտեմբերի 2025 թվական:**